



Ծնվել է 1919 թվականին Շամխորի շրջանի Բարում գյուղում: 1941 թվականի հունիսին զորակոչվել է: Մարտնչել է Բեռլինում, գեներալ ժուկովի հրամանատարությամբ: Կռվել է Բրյանսկում: 1943 թվականին Մինսկում ծանր վիրավորվել է գլխից, երկար ժամանակ հոսպիտալում բուժվելուց հետո, որպես հաշմանդամ զորացրվել և վերադարձել է տուն: Երկար տարիներ հայրենի Բարում գյուղում աշխատել է որպես մանկավարժ: Պատերազմի ժամանակ կատարած սխրագործությունների, ինչպես նաև մանկավարժական - հասարակական գործունեության համար արժանացել է բազմաթիվ խրախուսանքների, ստացել բազմաթիվ շքանշաններ և մեդալներ: Մահացել է 2011թ հունիսի 9-ին: